ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծապատիւ խմբագիր.

Պր. Ս. Լիսիցեանը «Ցարազ» շաբաթաթերթի 34—37 համարներում քննելով պ. Կ. Նաղուբեանի աշխատասիրած «Հայերէն-ռուսերէն բառարանը»՝ իմ մասին ես, իբրև այդ բառարանի լառաջաբանում լիշատակուած աշխատակցի՝ հետեւեալ նկատողութիւնն է արել.

«Մեզ համար խիստ անախորժ երեոյթ է, որ սորան (բառարանին) աշխատակցել է մի անձ, որ այսպէս թէ այնպէս մեր հասարակութեան մէջ հաւագէտի անուն է վայելում և որ ինքն վերին աստիճանի արդարացի կերպով դատապարտել է պ. Ա. Յովհաննիսեանի ռուսերէն-հայերէն բառգիրքը. հասարակութիւնը իրաւունք ունի չը ներել պ. Մալխասեանի այս կերպ ընկերասիրութիւնը» («Ցարազ», 1891 թ., № 37, երես 555).

Որովհետև այդ նկատողութիւնը, որչափ կարելի է մակաբերել, իմ բարոյական կողմն է չօշափում, իբրև թէ ես պարտաճանաչ և բարեխիղճ եղած չը լինիմ պ. Կ. Նաղուբեանի բառարանին աշխատակցելիս, կամ թէ ընկերութեան դաղափարին դաւաճանած լինիմ՝ ուստի այդ բարոյական արատը ինձանից հեռացնելու նպատակով ստիպուած եմ այս երկուսողբացատրութիւնը դրել, որ խնդրում եմ զետեղէք «Մուրճ»-ի մէջ.

Նախ և առաջ, լոկ տրամաբանօրէն դատելով՝ հայ հասարակութիւնը այն ժամանակ միայն կարող է ինձ չը ներել՝ եթէ ես ինքս մի ռուսերէն-հայերէն բառարան կազմեմ և նորա մէջ անեմ նոյն սխալները, որոնց ես դատապարտել եմ Ա. Յովհաննիսեանի բառարանում.

Երկրորդ՝ հայ հասարակութիւնն ինձ ներելու կամ չը ներելու իրաւունք և ընդհանրապէս որ ե է հաշիւ չէ կարող ունենալ այս բառարանի վերաբերութեամբ՝ երբ նորա վերայ դրուած է հեղինակի անունը և երբ հեղինակն լառաջաբանում լայտնում է հրապարակաւ, թէ «իմ աշխատակիցները հեռու են պակասաւոր կողմերի պատասխանատուութիւնից։ Նոցա արածից ես այն եմ քաղել, ինչ որ ինձ հաւանական է թուել։ Ուստի վերջնական պատասխանատուութիւնը միմիայն ինձ վերայ կարող է ընկնել». (Ցառաջ. VI)։ Կարծեմ շատ պարզ է (և բնական միանդամայն), որ հասարակութիւնը հաշիւ կարող

է ունենալ միայն հեղինակի հետ և ոչ այն անձերի, որոնց անուններն լիշած են լառաջաբանում և կարող էին լիշած չը լինել։ Ինձ հետ հաշիւ ունենալ, ներել կամ չը ներել ինձ՝ կարող է միայն հեղինակը. իսկ նա ինձ հետ հասարակութեան առաջ հաշիւ է տեսնում՝ շնորհակալութիւն լայտնելով։ Եւ հասարակութիւնն ու քննադատը միայն այսքան գիտեն պաշտօնապէս, որ ես այդ բառարանին շնորհակալութեան արժանի ծառայութիւն եմ մատուցել։

Բայց հասարակութիւնը և քննադատը կարող են զարմանալ և տարակուսել, թէ ինչպէս է եղել, որ ես, լեզուի ու բառարանագրութեան ծանօթ մէկը՝ (ինչպէս դրում է պ. Ս. Լիսիցեան), խորհուրդներ եմ տալիս Կ. Եաղուբեանի «բառարանի ծաւալի, դիրքի, ուղղութեան և այլն մասին, կարդում եմ բոլոր նիւթը և տեղ-տեղ անում եմ իմ նկատողութիւններս» [1]), և այնու ամենայնիւ բառարանում պատահում են թերութիւններ, որոնք չը պէտք է լինէին իմ աշխատակցութիւնից լետոյ։

Այս զարմանքը, որ շատերն ես ինձ լայտնել են բերանացի՝ կարծեմ կանհետանայ՝ երբ հասարակութիւնն ու քննադատը նկատեն հետևեալ կէտերը.

1) Պր. Ս. Լիսիցեանի ցոյց տուած թերութիւններից գրեթէ կէսը ես չեմ համարում թերութիւն, մինչև իսկ մի քանիսը համարում եմ առաւելութիւն բառարանի համար։ Ուրեմն ես չէի կարող ուղղել այն բանը, որ քննադատը թերութիւն է համարում, իսկ ես՝ ոչ։

2) Ես կարդացել եմ բուն բառարանի նիւթը միայն (առանց լառաջաբաններին և համառօտ քերականութեան)։ Ուրեմն լառաջաբանների և քերականութեան նկատմամբ ես ոչ մի պատասխանատուութեան չեմ կարող ենթարկուել ոչ ոքի կողմից։

3) Ցանձն առնելով կարդալ բառարանի նիւթը, տպարանին լանձնելուց առաջ՝ ես խոստացել եմ իմ ընկերիս, Կ. Եաղուբեանին՝ թեթև կերպով նրան աչքէ անցնել և նկատողութիւններս անել, և ոչ թէ մանրամասն կերպով քննել և ուղղել, որ ես չէի կարող լանձն առնել, քանի որ ժամանակս չէր ներում։ Ուրեմն, թեթև կերպով նայելով, ես ընդհանրապէս կոկել եմ բնագիրը և հասցրել մի որոշ աստիճանի կատարելութեան։ Չեմ ուրանում, որ եթէ սորա համար գործ դրած ժամանակիս կրկնապատիկը կարողանալի գործ դնել և աւելի մանրամասն քննել և ուղղել՝ բառարանում՝ այժմ եղած թերութիւններից շատերը թերևս չը լինէին։ Բայց այս բանը ես չէի խոստացել հեղինակին, որովհետև չէի կարող։

4) Իմ նկատողութիւններս պարտաւորիչ չէին հեղինակի համար [2]).

---

[1]) Ցառաջ. V.

[2]) «Новое Обозрѣніе» լրագրի օգոստոսի համարներից մէկում տպած էր մի լուր, որ Թէ Կ. Եաղուբեանի բառարանը լոյս է տեսնում իմ խմբագրութեամբ։

նա իմ «արածից» ալն է քաղել, ինչ որ նորան հաւանական է թւել։ Ուրեմն կարող են բառարանում լինել ալնպիսի թերութիւններ ես, որոնց ես նկատած լինեմ իբրև թերութիւն՝ բալց հեղինակն հաւանութիւն տուած չը լինի նրանց ուղղելու։

Այս համառօտ բացատրութիւնը—որչափ ներում էր խնդրի փափուկ դրութիւնը—լուս ունիմ կը փարատէ հասարակութեան և պ. Լիսիցեանի զարմանքն, բալց ոչ թէ ինձ կարժանացնէ նոցա ներողամտութեան, որովհետև ես ներելու պէտք ունեցող ոչինչ չեմ արել և ներելու կամ չը ներելու իրաւասութիւնը այս խնդրում չէ պատկանում հասարակութեան և քննադատին։

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ։

15 Հոկտեմբերի, 1891 թ.
Թիֆլիս։

Կ. Նաղուբեանը այդ լսի ղէմ դրաւոր հերքում ներկայացնելով խնդրել է ապել։ Նորանից յետոյ ես ինքս էլ յատկապէս խնդրեցի պ. խմբագրից, որ Կ. Նաղուբեանի հերքումը ապէ։ Նա խոստացաւ ապել։